

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲՆԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
ԹԱԻՐԻԶՈՒՄ

Թաւրիզ, 14 հոկտեմբերի

Թաւրիզն սնտաքբեր չը մնաց հայ ազգութեան պատիւ բերող տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի միացեալ համազգային յօբնլեանական մեծ հանդիսի կատարման վերաբերութեամբ, այլ արձագանք տուեց Ամենայն Հայոց Հայրապետի ձայնին, և, ըստ յայտարարութեան Ատրպատականի առաջնորդական փոխանորդի, Ղալայի ս. Աստուածածին եկեղեցում տեղի ունեցան հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ հայ գրի ու հայ տըպագրութեան վաստակաւորների յիշատակին հոկտեմբերի 12-ին. իսկ երէկ, կիրակի, հոկտեմբերի 13-ին, նոյն եկեղեցում՝ պատարագից յետոյ կատարվեց հայրապետական մաղթանք, որից յետոյ Արամեան դըպրոցի բակում, բացօդեայ, աշնանային արեզակի հաճելի շողերի տակ, կատարվեց հանդէսը՝ սկսելով առաւօտեան ժամը 10-ից:

Որովհետև կարգադիր յանձնախումբը ծրագիր-յայտարարութիւն էր ուղարկել նաև կաթօլիկ և բողոքական միսիաներին, հանդիսում ներկայ էին միայն լազարիստների կողմից երկու վարդապետ՝ երկսեռ ընտիր հայ բազմութեան առնթերս Որովհետև երեք ուսումնարանների մանկավարժական մարմինների նախաձեռնութեամբ էր պատրաստվել հանդիսակարգը, ուստի հանդէսում կային 3 դպրոցների սան-սանուհիները իրանց ուսուցիչ-ուսուցչուհիներով:

Արամեան դպրոցի բակը զարդարված էր

շքեղապէս Պարսկաստանի ընտիր ու թան-
գապին գորգերով ու գոյնզգոյն դրօշակնե-
րով: Բոլոր գորգերի բերելը և նրանց կա-
հաւորելը յանձն էին առել հայր և որդի
Սարաճեանները ինքնաբերաբար, որպէս նաև
վճարել ուսաց զինւորական նուագախմբի
ծախսը:

Պատշաճ աթոռների և գորգածածկ նըս-
տարանների վրա բազմող հասարակութեան
հանդիսակաց գորգազարդ սիւների գլխին
դրված էին թարմ ծաղիկներից պսակազգեստ
անմահ Մեսրոպ Տարօնեցու և Սահակ կա-
թողիկոսի նկարները. քաղաքակրթութեան
այդ հսկայ գործօնների պատկառելի ներկա-
յութիւնը խոր ակնածանք էր ներշնչում և
միանգամայն երախտագիտութեան վառ
զգացմունք այնպիսի խոշոր ծառայութեան
համար, որպիսին մեծ անձնագոհութեամբ
ու ջանքերով ի գործ դրվեցին դրանց կող-
մից փրկելու համար հայ ժողովրդի յետա-
գայ կուլտուրական կեանքը:

Հանդէսը բացվեց աշակերտական երգե-
ցիկ խմբի «Հայր մերով»: Առաջին անգամ
բեմ բարձրացաւ Կենտր. ուսումնարանի
տեսուչ Յ. Դաւթեան և իմաստալից բովան-
դակութեամբ ճառեց հայ տառերի գիւտի
գերազանց նշանակութիւնը քրիստոնէական
կրօնի շրջանում և վարձատրվեց ծափահա-
րութեամբ: Երկրորդ անգամ բեմ բարձրա-
ցաւ Արամեան դպրոցի տեսուչ Ա. Տէր-
վարդանեան և ճոխ լեզուով ու ժեստերով
խօսեց Սահակ-Մեսրոպի մեծ գործունէու-
թեան և նաև տպագրական գործի հայերիս
մէջ մուտքի և նրա քաղաքակրթող գերի
մասին:

Երգվեցին խմբերգեր, նուագեց զինւորա-
կան նուագախումբը, մէջ ընդ մէջ ուսում-
նարանների սանուհիները և Արամեան դըպ-
րոցի ուսուցիչ Աւագ Մելիք-Աբրահամեան
արտասանեցին աւուր պատշաճի բանաստեղ-
ծութիւններ, որոնք նոյնպէս արժանացան
խանդավառ ծափահարութիւնների:

Ուսուցիչներից մէկը՝ ջութակի օգնու-
թեամբ՝ երգեց սօլօ Պատկանեանի «Լոյս
ամպերը...» շատ աջող:

Ամենից յետոյ բեմ բարձրացաւ Կիւլ-
պէնկեան եղբայրների առևտրական Թաւրի-
զի տան ներկայացուցիչ Խաչիկ-խան Սա-
րաճեան և, հակիրճ մի նախաբանից յետոյ,
որով գեղեցկապէս բացատրեց յօբելեան
բառի ծագումն ու նշանակութիւնը, լի
խանդավառութեամբ կարդաց իր յօբինած
«1500-ամեակի առթիւ սրբոցն Սահակայ և
Մեսրոպայ և սրատուական թարգմանչաց
մերոց ներբողեանը», մի ոտանաւոր գրու-
թիւն, որի մէջ հանդէս էր եկել երկու
սրբերի յիշատակելի գործունէութեան հետ
վաճառական-գրագէտ Սարաճեանի եռուն
հոգին: Ներբողիանի ընթերցանութիւնը խոր
տպաւորութիւն թողեց հանդիսականների
վրա, և հասարակութիւնը երկար ծափահա-
րեց Սարաճեանին:

Հանդէսում իր բացակայութեամբ փայ-
լում էր մեր առևտրական դասակարգն
ընդհանրապէս: Սարաճեանի բանաստեղծա-
կան ներբողն և ջերմ մասնակցութիւնը
պէտք է որ այրող դաս լինի թաւրիզեցի
շատերին, որոնք մամոնան ամեն բանից
գերազանց են ընդունում:

Հանդէսը փակվեց հ. փոխանորդի համա-
ռօտ բանախօսութեամբ ու «Հայր մերով»:
Հանդիսականները մեկնեցին քաղցր տպա-
ւորութեամբ: Լսեցի, որ յօբելեանական
յանձնախումբը մտազիր է կրթական ֆօնդի
օգտին սկսել հանգանակութիւն:

Հայկազուն